Արձանագրություն N 4

«ՇՀԱՊՁԲ-15/3 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **« 12 » « մարտի » 2016թ.**
ժամը՝ 10 30

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ն.Իսահակյան, Վ.Կիրակոսյան
Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Հ.Հովհաննիսյան, Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան

1. «ՇՀԱՊՁԲ-15/3 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ռ.Զոբանյան)

1.1. «ՇՀԱՊՁԲ-15/3 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2016 թվականի մարտի 12-ին, ժամը 10:30-ին, ՀՀ բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3 շ., 5-րդ հարկ հասցեում:

2. «ՇՀԱՊՁԲ-15/3 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

(Ռ.Զոբանյան)

2.1. «ՇՀԱՊՁԲ-15/3 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2016 թվականի մարտի 4-ին, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Սմարթլայն» ՍՊ և «Արմոնդ» ՍՊ ընկերությունների ներկայացրած «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող, իսկ «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

3.1. Քանի որ «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին ենթակետը՝ չափաբաժիններ 3; 15 և 37-ով «Սմարթլայն» ՍՊ ընկերությանը առաջարկված գնի նվազեցման շուրջ հրավիրել բանակցությունների:

3.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-ին կետի համաձայն 8-րդ չափաբաժնով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3.3. Հանձնաժողովի քարտուղարին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել «Սմարթլայն» ՍՊ ընկերությանը բանակցությունների վարման օրվա, ժամի և տեղի մասին:

3.4. Մրցույթը կասեցնել մինչև բանակցությունների նպատակով հրավիրված հանձնաժողովի նիստը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ.Զոբանյան)

4.1. «ՇՀԱՊՁԲ-15/3 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով մրցույթի բանակցությունների նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ 2016թ. մարտի 15-ին, ժամը 10:30-ին, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական 3 շենք, 5-րդ հարկ, ՀՀ բնապահպանության նախարարություն, 514 սենյակ:

5. Հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)		Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)		Ն.Իսահակյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)		Վ.Կիրակոսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)		Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)		Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)		Լ.Զոհրաբյան